

ք. Գավառ

14 մարտի 2014թ.

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Երանոս գյուղի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց)՝ ի դեմս տնօրեն Տիգրան Վահրամի Հակոբյանի, ով գործում է Երանոսի N 1 միջնակարգ դպրոցի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ելնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, Երանոսի N 1 միջնակարգ դպրոցի սովորողներին՝ նրանց նախասիրություններին և կարողություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, Համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

Կողմերը պարտավորվում են համագործակցել՝ Դպրոցի սովորողների իմացական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնելու, Համալսարանում ուսուցանվող մասնագիտություններին նրանց ծանոթացնելու և այլ ուղղություններով:

2. Համալսարանը պարտավորվում է՝

2.1. Դպրոցին անհատույց տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, ուղեցույցեր, այլ նյութեր,

- 2.2. Մեթոդական աջակցություն ցուցաբերել Դպրոցի ուսուցիչներին, նրանց համար կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ,
- 2.3. Յուրաքանչյուր տարի Դպրոցի աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու Համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ ծանոթանալու Համալսարանի ֆակուլտետներին, ամբիոններին, ուսուցանվող մասնագիտություններին և ուսումնառության առկա հնարավորություններին,
- 2.4. Դպրոցի ավարտական դասարանների աշակերտների համար իրականացնել տեղեկատվական աշխատանք՝ նախապատրաստելով բուհ ընդունվելուն,
- 2.5. Դպրոցի հետ համատեղ՝ ավարտական դասարանների լավագույն աշակերտների համար կազմակերպել օլիմպիադաներ, այլ միջոցառումներ,
- 2.6. Դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակից դարձնել Համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին:

3. Դպրոցը պարտավորվում է՝

- 3.1. Դպրոցում կազմակերպել Համալսարանի պրոֆեսորադասական անձնակազմի և սովորողների հանդիպումներ, ուսումնակրթական աշխատանքներ, զրույցներ, բանավեճեր և քննարկումներ, գրավոր աշխատանքներ, թեմատիկ մրցույթներ և այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,
- 3.2. Ուսումնական գործընթացում ըստ անհրաժեշտության ներգրավել նաև Համալսարանի մասնագետներին՝ նրանց համար ապահովելով բնականոն գործունեության պայմաններ,
- 3.3. Համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներին հրավիրել նաև Դպրոցի աշակերտների ծնողներին՝ Համալսարանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

4. Հուշագրի գործողության ժամկետը, փոփոխումը, լրացումը և գործողության դադարեցումը

- 4.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով,
- 4.2. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Հուշագրի անբաժանելի մասը,
- 4.3. Սույն Հուշագիրը գործողությունը դադարեցնում է 5 տարի անց, եթե Կողմերի համաձայնությամբ չի երկարաձգվում,
- 4.4. Սույն Հուշագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 4.5. Սույն Հուշագիրը բաղկացած է 3 էջից, կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

«Համալսարան»

«Դպրոց»

«Գավառի պետական
համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
Հեռ.՝ 060-46-02-01
Email – info@gsu.am, infogsu@mail.ru

«Երանոսի N 1 միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Երանոս
Հեռ.՝ 098-21-70-54

6. Կողմերի ստորագրությունները

«Համալսարան»

Ռ. Խ. Հակոբյան

«Դպրոց»

Տ.Վ. Հակոբյան